ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՐՅԱՆ Փ. 22
0002
ԱՍ/34.3-Մ2-4/1612-2023 պ/տ

Հարգելի

Հարկային գանձված է Tax percue	HAYPOST

L0109493642AM

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ RETURN	CN15
☐ Անհայտ/ Unknown	☐ Մերժված/ Refused
☐ Տեղափոխված/ Gone away	☑ Չի պահանջվել/ Unclaimed
☐ Թերի հասցե/ Insufficient address	☐
Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date	

«Գ.ՍՈՒԼՈՐ» ՍՊԸ
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ, ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ., 27Ա, 33

Տրված նշանակված տեղեկատվության
Designated

«ՓՈՍԼԱՐ» ՍՊԸ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ,
ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ., 27Ա, 33

A.R.

Ծառայողական/
On postal service
Ծանուցագիրը վերադարձնող
գրասենյակի կնիքը/
On postal service

Առաքանու բնույթը/Nature of the item

☐ Առաջնային նամակ/ Priority letter
☐ Հրատարակչություն/ Printed paper
☐ Ծանրոց/ Parcel
☐ Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter

☐ Պատվիրված/Registered
☐ Վկայագրված հանձնում/ Recorded delivery
☐ Գնահատված/ Insured

Առաքանու թիվը/
No of item LO109493642AM

Գումար/Amount 760

☐ Հասարակ դրամական փոխադրություն/ Ordinary money order

Գումար/Amount 760

☐ Փոխանցման անդորրագիր/ Inpayment money order
☐ Վճարման անդորրագիր/ Outpayment cheque

Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

☐ հանձնվել է/ delivered
☐ վճարվել է/ paid
☐ գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,if the regulations of the country of destination so provide by another authorized person.

Հավելյալ Նշում 1՝ ԱՍ/34.3-Մ2-4/1612-2023 պ/տ
Հավելյալ Նշում 2՝

Լրացվում է ուղարկողի կողմից/To be filled in by the receiver

Առաջնային/Priority
Օդային/By airmail

Վերադարձնել /
Return to

Անուն կամ գրասենյակի անվանում/ Name	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Փողոց և թիվ/ Street and No	ՍԱՐՅԱՆ Փ. 22 0002
Բնակավայր և երկիր/ Locality and country	Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ

AL0109493642AM

powered by Envelope, envelope.haypost.am

RETURN

☐ Անհայտ/ Unknown
☐ Տեղափոխված/ Gone away
☐ Թերի հասցե/ Insufficient address
☐ Մերժված/ Refused
☑ Չի պահանջվել/ Unclaimed
☐

Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date

Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ, ՄԱՄԻԿՈ

ARMENIA
YEREVAN
26 MAY 2023
0014

ARMENIA
YEREVAN
26 JUN 2023
0002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-10) 52-85-11 (406), ՖԱՔՍ (374-10) 525563

« 18 » մայիսի 2023թ.

№ ԱՍ/34.3-Մ2-4/1612-2023

«Գ.ՍՈԼԱՐ» ՍՊԸ-ի
տնօրեն Գ. Ղազարյանին

Հարգելի պարոն Ղազարյան,

Ձեզ է ուղարկվում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 17-ի «Գ.ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վարչական բողոքը մերժելու մասին» №172-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ 16 էջ:

Invalid signature

X

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

Ա. Սաֆարյան

Կատարող՝ Է. Ներսիսյան ☎ 528590 (348)

600.0172.17.05.23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մայիսի 2023 թվականի №172-Ա
ք. Երևան

«Գ. ՍՈԼԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա. «Գ.ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի փետրվարի 22-ին վարչական բողոք է ներկայացրել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով անվավեր ճանաչել Հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 23-ի №498-Ա (այսուհետ՝ №498-Ա որոշում) որոշման 1-ին մասի 14-րդ կետը՝ Ընկերության նկատմամբ սահմանած սակագնի մասով, և վերջինիս նկատմամբ սահմանել սակագին՝ առանց հաշվարկի մեջ կիրառելու Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկան հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №88-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայի (այսուհետ՝ Մեթոդիկա) 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված 0,9 գործակիցը: Ընկերությունը, մատնանշելով Սահմանադրության 73-րդ հոդվածի, «Նորմատիվ

իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի իրավանորմերը, որպես վերոհիշյալի հիմնավորում, նշել է, որ №498-Ա որոշմամբ Հանձնաժողովը խախտել է նորմատիվ իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողության կանոնները՝ հետադարձ ուժով օժտելով վատթարացնող իրավական նորմին, որպիսին է՝ Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերությունը, ինչպես նաև խախտվել են Ընկերության՝ էլեկտրական էներգիայի արտադրությունն ապահովելու նպատակով առաջացած իրավահարաբերությունների ծագման պահի դրությամբ առկա լեգիտիմ ակնկալիքները՝ Ընկերության պնդմամբ, վերջինիս նկատմամբ ոչ իրավաչափորեն կիրառելու մասով: Բացի այդ, Ընկերությունն անընդունելի է համարել, որ վարչական մարմինը նման իրավակարգավորումը կիրառելու փաստը դիտարկում է որպես Ընկերության կամ Հանձնաժողովի համար ընտրության հնարավորություն, այսինքն՝ կա՛մ տնտեսվարող սուբյեկտը չի կատարում որևէ գործողություն՝ ուղղված նախնական տեխնիկական պայմանում կամ հողատարածքի փաստաթղթերում փոփոխություն կատարելուն (նույնիսկ եթե այդ փոփոխությունը բխում է բոլորովին օբյեկտիվ հանգամանքներից) և ստանում է սակագին՝ առանց 0,9 գործակցի, կա՛մ կարողանում է կատարել համապատասխան փաստաթղթերում փոփոխություն և ստանում է սակագին՝ 0,9 գործակցով.

բ. 2023 թվականի փետրվարի 22-ին հարուցվել է №498-Ա որոշման վերաբերյալ Ընկերության վարչական բողոքի քննարկման վարչական վարույթ, ինչի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 24-ի №ԳԲ/34.3-Մ2-3/633-2023 գրությամբ,

գ. իրականացված վարչական վարույթի շրջանակում հաստատված է համարվել, որ՝

1) №498-Ա որոշման իրավաչափությունը բխում է հետևյալ իրավանորմերից.

- «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետ, համաձայն որի Հանձնաժողովն իրավասու է սահմանելու էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության, էներգետիկայի բնագավառում հաղորդման (փոխադրման), բաշխման, համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկայի

օպերատորի և շուկայի կանոններով սահմանված համակարգային ծառայությունների սակագները.

- Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 18-ի «Գ.ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Գ.Սոլար» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանելու մասին» №407Ա որոշման (այսուհետ՝ №407Ա որոշում) ընդունման պահին գործող՝ Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերություն (ներկայումս՝ Հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 29-ի №520-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների հաշվարկման մեթոդիկայի 42-րդ կետի 7-րդ ենթակետ), համաձայն որի Մեթոդիկայի 1-ին կետի 7-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նշված և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորությամբ կառուցված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած՝ փաստաթղթերով ներկայացված կայանի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքի (բացառությամբ կայանը էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ օդային գծերի, հենասյուների, հաշվառման համակարգի, բաշխման ցանցին միացման կետում այլ օժանդակ սարքավորումների տեղադրման համար անհրաժեշտ հողատարածքի) փոփոխման (ընդլայնման) կամ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման լարման փոփոխման դեպքերում՝ սահմանվում է Մեթոդիկայի 3-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն համապատասխան ժամանակահատվածի համար ձևավորված մեծության և 0.9 գործակցի արտադրյալին հավասար,
- №407Ա որոշման ընդունման պահին գործող՝ Հանձնաժողովի 2020 մայիսի 27-ի №176-Ն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետի (ներկայումս՝ Հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 23-ի №494-Ն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերություն), համաձայն որի Մեթոդիկայի 1-ին

կետի 7-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նշված արևային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքերի առկայության պարագայում և էլեկտրական էներգիայի արտադրության փուլ անցնելու (լիցենզիայում համապատասխան փոփոխություններ կատարելու), սակագին սահմանելու համար Հանձնաժողովի հաստատած կարգերով նախատեսված գործողությունները կատարելու և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը պատշաճ կարգով մինչև 2022 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ Հանձնաժողով ներկայացնելու դեպքում՝ սահմանվում է 21.891 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի,

- Հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի №359-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգի (այսուհետ՝ Սակագների կարգ) 14-րդ կետ, համաձայն որի հայտն ուսումնասիրության չընդունելու դեպքում հայտատուն, հայտնաբերված թերությունները վերացնելուց հետո, կարող է նոր հայտով դիմել Հանձնաժողով: Այդ դեպքում հայտատուն իրավունք ունի հղում կատարել նախկին հայտով ներկայացված փաստաթղթերին, եթե դրանցում ներկայացված տվյալները նոր հայտի ներկայացման պահին չեն փոփոխվել:

2) №498-Ա որոշումն ընդունվել է օրենքներին ու գործող այլ իրավակարգավորումներին համապատասխան, ուստի դրա վերանայման հիմքերը բացակայում են: Մասնավորապես,

- ✓ Հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 21-ի №311-Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրվել է «Գ.Սոլար» արևային կայանում (ՀՀ Արագածոտնի մարզի Կարմրաշեն համայնքի վարչական տարածք) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0656 լիցենզիան (այսուհետ՝ Լիցենզիա)՝ մինչև 2040 թվականի նոյեմբերի 22-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2020 թվականի նոյեմբերի 22-ը,

- ✓ Ընկերությունը, Լիցենզիայի ստացման հայտում, ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացրել է նաև 2019 թվականի հունիսի 5-ի էլեկտրաէներգետիկական համակարգին միացման №ՏՊ-151-6(10)/0349 նախնական տեխնիկական պայմանը,
- ✓ Ընկերությունը վերոնշյալ կայանում էլեկտրական էներգիայի արտադրության փուլ անցնելու նպատակով՝ 2020 թվականի հոկտեմբերի 1-ին Հանձնաժողով է ներկայացրել Լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու վերաբերյալ դիմում, ինչպես նաև սակագնի սահմանման հայտ, որով խնդրել է Ընկերության կայանից էլեկտրական էներգիայի արտադրության սակագինը սահմանել 24.323 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի: Ընկերության կողմից, ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացվել է նաև նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2020 թվականի մարտի 5-ի էլեկտրաէներգետիկական համակարգին միացման №ՏՊ-151-6(10)/0298 տեխնիկական պայմանը, համաձայն որի փոփոխվել են բաշխման ցանցին կայանի միացման լարման պայմանները՝ նախկին 35 կՎ-ի փոխարեն դառնալով 10 կՎ,
- ✓ Հանձնաժողովը 2020 թվականի հոկտեմբերի 15-ի №ՍՇ/34.1-Մ4-2/4336-2020 գրությամբ, հիմք ընդունելով Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի 46-րդ կետը և 25-րդ կետի 1-ին ենթակետը, մերժել է Լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու վերաբերյալ դիմումը, ինչպես նաև հիմք ընդունելով Սակագների կարգի 12-րդ կետի 3-րդ ենթակետը, ուսումնասիրության չի ընդունել սակագնի սահմանման հայտը:
- ✓ Ընկերությունը 2020 թվականի հոկտեմբերի 19-ին կրկին ներկայացրել է Լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու վերաբերյալ դիմում և սակագնի սահմանման հայտ,
- ✓ Հանձնաժողովը 2020 թվականի նոյեմբերի 2-ի №ՍՇ/34.1-Մ4-3/4480-2020 գրությամբ, հիմք ընդունելով իր 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն

որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի 46-րդ կետը և 25-րդ կետի 1-ին ենթակետը, կրկին մերժել է Ընկերության ներկայացրած՝ Լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու վերաբերյալ 2020 թվականի հոկտեմբերի 19-ին Հանձնաժողով ներկայացված դիմումը և, հիմք ընդունելով Սակագների կարգի 12-րդ կետի 3-րդ ենթակետը, ուսումնասիրության չի ընդունել սակագնի սահմանման հայտը,

- ✓ 2020 թվականի նոյեմբերի 6-ին Ընկերությունը Հանձնաժողով է ներկայացրել Լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու վերաբերյալ նոր դիմում և սակագնի սահմանման նոր հայտ՝ հայտնելով, որ վերացրել է Հանձնաժողովի նոյեմբերի 2-ի №ՍՇ/34.1-Մ4-3/4480-2020 գրությամբ նշված թերությունները,
- ✓ Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2020 թվականի նոյեմբերի 12-ի №ԱՍ/34.3-Մ2-7/4611-2020 գրությամբ Ընկերությունը տեղեկացվել է, որ 2020 թվականի նոյեմբերի 6-ին ներկայացված՝ Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտը համապատասխանում է Սակագների կարգի պահանջներին, և Հանձնաժողովն սկսել է հայտի ուսումնասիրության գործընթացը,
- ✓ №407Ա որոշմամբ Ընկերության Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանվել է 21.891 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի՝ հիմք ընդունելով որոշման ընդունման պահին գործող՝ 2020 թվականի հոկտեմբերի 6-ից գործող խմբագրությամբ Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերությունը, ինչպես նաև Հանձնաժողովի 2020 մայիսի 27-ի №176-Ն որոշումը,
- ✓ Մեթոդիկայի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերը հաշվի առնելով՝ Հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 26-ի №202-Ա, 2022 թվականի մայիսի 25-ի №220-Ա և №498-Ա որոշումներով վերանայվել է №407Ա որոշմամբ սահմանված սակագինը: Վերանայումն իրականացվել է հիմք ընդունելով միայն Մեթոդիկայով նախատեսված՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի

Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքի և սղաճի փոփոխությունները, իսկ 0,9 գործակիցը սակագնի նկատմամբ կիրառվել է ի սկզբանե՝ №407Ա որոշմամբ:

Անդրադառնալով Ընկերության փաստարկներին՝ հարկ է նշել, որ նախ, սույն վարչական բողոքով Ընկերությունը բողոքարկել է №498-Ա որոշումը, սակայն բողոքարկման համար Ընկերության ներկայացրած բոլոր փաստարկները վերաբերում են №407Ա որոշմանը և դրանք լիովին անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

- Հանձնաժողովի կողմից Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերությունը՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոններին հակասող եղանակով կիրառելու վերաբերյալ Ընկերության շարադրած փաստարկների առնչությամբ հարկ է նշել, որ դրանք ընդհանրապես կիրառելի չեն սույն հարցի նկատմամբ, քանի որ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի վերաբերյալ կանոնի կիրառման համար անհրաժեշտ նախադրյալները կամ հանգամանքները տվյալ դեպքում առկա չեն: Մասնավորապես, Սահմանադրության 73-րդ հոդվածի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն, անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 73-րդ հոդվածին համապատասխան՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն, իսկ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով: Հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանն անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի կանոնի էության և կիրառման առանձնահատկությունների

վերաբերյալ դիրքորոշումներ է արտահայտել իր մի շարք որոշումներով (Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-649, ՍԴՈ-723, ՍԴՈ-758, ՍԴՈ-881, ՍԴՈ-1000, ՍԴՈ-1061, ՍԴՈ-1142, ՍԴՈ-1224, ՍԴՈ-1326 ՍԴՈ-1437 որոշումները): Նորմատիվ իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողության արգելքի վերաբերյալ նշված կանոնի կիրառման ընդհանուր մոդելը կամ նշված կանոնի կիրառման համար անհրաժեշտ ընդհանուր նախադրյալները հանգում են հետևյալին.

ա) իրավունքի սուբյեկտը որոշակի պահի դրությամբ ունենում է կոնկրետ իրավանորմի բովանդակությանը համապատասխանող կամ դրանից բխող որոշակի սուբյեկտիվ իրավունքներ ու պարտականություններ (իրավական վիճակ),

բ) նշված իրավանորմի բովանդակությունը վերը նշված և արձանագրված պահի համեմատ կրում է բովանդակային փոփոխություն,

գ) նշված բովանդակային փոփոխությունն ունենում է վատթարացնող ազդեցություն իրավունքի սուբյեկտի իրավական վիճակի (իրավունքների ու պարտականությունների ամբողջության) նկատմամբ:

Ընդ որում, վերը նշված «ա» և «բ» կետերում նշված նախադրյալները ենթակա են ուղղակի արձանագրման, իսկ «գ» կետում նշված նախադրյալի առկայությունը ենթակա է գնահատման: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ միայն նշված բոլոր նախադրյալների առկայության պայմաններում կարող է քննարկվել տվյալ պարագայում հիշյալ կանոնի կիրառման հնարավորությունը: Այլ կերպ, վերոնշյալ բոլոր նախադրյալների առկայությունը հաջորդաբար ստուգելուց և ամբողջության մեջ բոլոր նախադրյալների առկայությունը փաստելուց հետո միայն կարելի է քննարկել հետադարձ ուժի արգելքի կանոնի կիրառման անհրաժեշտության հարցը: Քննարկվող իրավահարաբերությունների ծագման պահին գործող՝ Սակագների կարգի 1-ին կետի համաձայն՝ նույն կարգը սահմանում է էլեկտրական էներգիայի (հզորության) և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ համակցված), էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի

հաղորդման (փոխադրման), բաշխման, մատակարարման (այդ թվում՝ երաշխավորված մատակարարման), էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման, էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի օպերատորների լիցենզիա ստանալու հայտ ներկայացնող կամ լիցենզիա ունեցող անձանց սակագների սահմանման ու վերանայման գործընթացը: Հարկ է նշել, որ նշված կարգը Ընկերության համար կիրառելի է այնքանով, որքանով կարգավորում է արդեն լիցենզիա ունեցող ընկերությունների համար սակագների սահմանման ու վերանայման ընթացակարգն ու գործընթացը: Նշված կարգի բովանդակությունից բխում է, որ էներգետիկայի բնագավառում սակագների սահմանումն ու վերանայումն իրականացվում են սակագների սահմանման կամ վերանայման վերաբերյալ հայտի քննարկման ու համապատասխան որոշում ընդունելու միջոցով, բացառությամբ նույն կարգի 3-րդ բաժնով նախատեսված՝ Հանձնաժողովի նախաձեռնությամբ սակագների վերանայման դեպքերի: Ըստ այդմ, սակագնի սահմանման հայտ ներկայացնելու ուժով լիցենզավորված սուբյեկտի ու Հանձնաժողովի միջև առաջանում է վարչարարական իրավահարաբերություն՝ ներկայացված հայտի՝ Սակագների կարգին համապատասխանության ու հայտի ընդունելիության և սակագնի սահմանման կամ վերանայման առնչությամբ, որը կարող է եզրափակվել հայտն ուսումնասիրության չընդունելով, ուսումնասիրության ընդունված հայտի մերժմամբ, ինչպես նաև սակագնի սահմանման կամ վերանայման մասին որոշում ընդունելով: Նշված իրավահարաբերության բովանդակությունն է կազմում, մի կողմից՝ լիցենզավորված անձի իրավունքը՝ ստանալ նորմատիվ ակտերին ու կարգավորումներին համապատասխանող սակագին, իսկ մյուս կողմից՝ Հանձնաժողովի համարժեք կամ հանդիպական պարտականությունը՝ սահմանել նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխանող սակագին: Վերոշարադրյալ վերլուծությունների համատեքստում Հանձնաժողովը փաստում է, որ տվյալ դեպքում Ընկերությունը Կայանից

առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման համար ուսումնասիրության ընդունված հայտը ներկայացրել է 2020 թվականի նոյեմբերի 6-ին, ինչի մասին Ընկերությունը իրազեկվել է Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2020 թվականի նոյեմբերի 12-ի №ԱՍ/34.3-Մ2-7/4611-2020 գրությամբ, և սակագնի սահմանման հայտի ուսումնասիրության (վարչարարության) արդյունքում արդեն ընդունվել է վիճարկվող որոշումը: Այսպիսով, Մեթոդիկայի կիրառելիության առնչությամբ իրավահարաբերությունները տվյալ դեպքում ծագել են 2020 թվականի նոյեմբերի 6-ից՝ ուսումնասիրության ընդունված հայտի ներկայացման պահից: Հանձնաժողովը փաստում է, որ Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերությունը նախատեսվել է Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 30-ի №348-Ն որոշմամբ, որն ուժի մեջ է մտել 2020 թվականի հոկտեմբերի 6-ին, այսինքն՝ Որոշման կայացմանն ուղղված իրավահարաբերությունները ծագելու պահից 1 ամիս առաջ: Նման պայմաններում Հանձնաժողովը փաստում է, որ Ընկերության իրավական վիճակը վատթարացնող իրավակարգավորման՝ ենթադրաբար կիրառման վերաբերյալ Ընկերության փաստարկները կիրառելի չեն սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ, քանի որ խնդրո առարկա իրավանորմն ուժի մեջ է մտել նշված իրավահարաբերությունների ծագումից ավելի վաղ: Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերության՝ հետադարձ ուժի արգելքի կանոնի խախտմամբ կիրառված լինելու հարց տվյալ դեպքում նույնիսկ չի կարող քննարկվել:

- Ընկերության կողմից իրավահարաբերությունների ծագման պահը 2020 թվականի հոկտեմբերի 1-ին ներկայացված սակագնի սահմանման հայտի (որը Հանձնաժողովի կողմից ուսումնասիրության չի ընդունվել) ներկայացման պահով պայմանավորելու հետ կապված փաստարկների առնչությամբ հարկ է նշել, որ Հանձնաժողովի 2020 մայիսի 27-ի №176-Ն որոշման, ինչպես նաև Մեթոդիկայի կիրառման հարց կարող էր բարձրացվել

բացառապես Սակագների կարգին համապատասխան՝ ուսումնասիրության ընդունված հայտի ներկայացման պարագայում, քանի որ միայն այդ պարագայում կարող է քննարկվել, թե ինչ չափի սակագին կարող է սահմանվել կոնկրետ դեպքում կամ ինչ բանաձև կամ մեթոդիկա է ենթակա կիրառման որոշակի սակագին սահմանելիս: Տվյալ դեպքում Սակագների կարգի իմաստով ուսումնասիրության ընդունված հայտ Ընկերությունը ներկայացրել է 2020 թվականի նոյեմբերի 6-ին (խնդրո առարկա իրավակարգավորումն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 2020 թվականի հոկտեմբերի 6-ից հետո), որի՝ ուսումնասիրության ընդունված լինելու վերաբերյալ Ընկերությունը տեղեկացվել է Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի №ԱՍ/34.3-Մ2-7/4611-2020 գրությամբ: Իսկ, ինչ վերաբերում է Ընկերության կողմից 2020 թվականի հոկտեմբերի 1-ին և հոկտեմբերի 15-ին ներկայացված հայտերին, ապա Սակագների կարգի 14-րդ կետով հստակ սահմանվում է, որ հայտն ուսումնասիրության չընդունվելու դեպքում սակագնի սահմանման համար կրկին դիմելու պարագայում հայտատուն կարող է ներկայացնել նոր հայտ: Ընդ որում, ակնհայտ է, որ յուրաքանչյուր անգամ թերությունները շտկելու և նոր հայտ ներկայացնելու դեպքում այն չի կարող համարվել սկզբնական հայտին (հայտերին) ի լրումն ներկայացված: Այն համարվում է լրիվ նոր հայտ և այն ներկայացնելուց հետո Հանձնաժողովի կողմից ձեռնարկվում են Սակագների կարգով սահմանված բոլոր գործողությունները, այդ թվում՝ Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումը քննարկում է հայտի ուսումնասիրության ընդունման հարցը: Այսպիսով, Ընկերության կողմից 2020 թվականի հոկտեմբերի 1-ին և հոկտեմբերի 19-ին ներկայացված՝ սակագնի սահմանման հայտերը Հանձնաժողովի կողմից ուսումնասիրության չեն ընդունվել, և դրանք ներկայացնելու արդյունքում չեն էլ առաջացել սակագնի սահմանման իրավահարաբերություններ, այլ միայն՝ ներկայացված հայտի՝ Սակագների կարգին համապատասխանության ու հայտի ընդունելիության առնչությամբ իրավահարաբերություններ, և չի կարող №407Ա որոշմամբ կարգավորվող

իրավահարաբերության ծագման պահը պայմանավորված լինել այդ հայտերի ներկայացման պահով:

- Ընկերության հարցադրման մասով այն մասին, թե արդյոք №498-Ա որոշումը Հանձնաժողովի կողմից իրականացված պատշաճ վարչարարության հետևանք է, հարկ է նշել, որ Ընկերության կողմից վիճարկվող իրավակիրառ իրավասությունը Հանձնաժողովը, պետության անունից, որպես Սահմանադրությամբ և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով ստեղծված ինքնավար պետական մարմին, իրականացնում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» և «Էներգետիկայի մասին» օրենքներով սահմանված իրավասությունների շրջանակում, վերջինիս՝ որպես իշխանական-կարգադրիչ բնույթի լիազորություններ իրականացնող վարչական մարմնի գործունեությունն ուղղված է իրավունքի համապատասխան հասցեատերերի, տվյալ դեպքում՝ Ընկերության սուբյեկտիվ իրավունքների ու իրավաբանական պարտականությունների կենսագործման պայմանների ապահովմանը, և, տվյալ դեպքում՝ Հանձնաժողովի կողմից այս կամ այն սակագինը սահմանելու հնարավորությունը բացառապես բխել է Ընկերության գործողություններից: Անդրադառնալով Ընկերության հարցադրմանը, թե քննարկվող՝ Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերությամբ տնտեսվարող սուբյեկտին, թե Հանձնաժողովին է տրվում այս կամ այն սակագինն ընտրելու հնարավորություն՝ պետք է արձանագրել, որ Մեթոդիկայի քննարկվող նորմերի կիրառումը չունի որևէ աղերս Հանձնաժողովի հայեցողական իրավակիրառ լիազորության հետ, այն է՝ վերջինս այս դեպքում չուներ մի քանի հնարավոր իրավաչափ նորմերից (լուծումներից) մեկը կիրառելու հայեցողական լիազորություն: Քննարկվող կարգավորմամբ Հանձնաժողովին տրված չէ իրավասություն միևնույն փաստական հանգամանքների առկայության պայմաններում ընտրել մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից մեկը, այլ Ընկերության կողմից այս կամ այն գործողությունը կատարելու պարագայում Հանձնաժողովը

պարտավոր է կիրառել Մեթոդիկայով սահմանված՝ սակագնի հաշվարկման կոնկրետ մեխանիզմը: Այսինքն՝ Ընկերության կողմից բաշխման ցանցին կայանի միացման լարումը չփոփոխելու պարագայում վերջինիս համար չէր առաջանա նոր իրադրություն, և կայանը կառուցելով Լիցենզիան ստանալու պայմաններով՝ Լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած փաստաթղթերով ներկայացված էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման լարմամբ, Ընկերությունը կունենար տվյալ ժամանակահատվածի համար ձևավորված սակագինը՝ 24.323 ՀՀ դրամ/կվտժ (առանց 0,9 գործակցի սակագին), իսկ համապատասխան փաստաթղթերում նշված փոփոխություններից որևէ մեկի առկայության դեպքում՝ 10%-ով ցածր սակագին (0,9 գործակցով սակագին): Այսպիսով՝ տնտեսվարող սուբյեկտը, նշված պարագայում հնարավորություն ուներ նախապես գնահատելով և իր վարքագծի համապատասխան հետևանքները հաշվի առնելով՝ նշված տարբերակներից ընտրել իր համար առավել ընդունելի տարբերակը:

- Ընկերության կողմից սխալ է մեկնաբանվել ու ներկայացվել լեգիտիմ ակնկալիքի իրավունքի էությունը և, մասնավորապես, այդ իրավունքի ծագման նախադրյալներն ու պայմանները: «Լեգիտիմ իրավունք» հասկացությունը որոշակի ու չափելի հասկացություն է և առաջին հերթին նման ակնկալիքը պետք է հիմնված լինի լեգիտիմ հիմքի վրա: Այսինքն՝ լեգիտիմ ակնկալիքը հարկ է մեկնաբանել լեգիտիմ հիմքի ու դրա կարգավորման առարկայի շրջանակներում: Հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 21-ի №311-Ա որոշմամբ ճանաչվել են Ընկերության՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքները, որոնք են՝ համապատասխան կայան կառուցելու, այնուհետև կառուցված կայանում էլեկտրական էներգիա արտադրելու ու նախատեսված եղանակներով արտադրված էներգիան իրացնելու իրավունքները: Այսինքն՝ Ընկերության լեգիտիմ ակնկալիքները տվյալ դեպքում կարող են լինել հենց նշված իրավունքների ճանաչված լինելու մասով, ոչ թե ճանաչված իրավունքների (տվյալ պարագայում և պահի դրությամբ դեռևս չկառուցված

կայանի) իրականացման եղանակների կամ պայմանների (արտադրված էներգիան որոշակի սակագնով առաքելու) մասով, որոնք դուրս են լեգիտիմ հիմքի կարգավորման առարկայից: Բացի այդ, Ընկերության ներկայացրած մեկնաբանության պարագայում ստացվում է, որ արտադրության լիցենզիայի ստացման ուժով լիցենզավորված սուբյեկտը ստանում է լեգիտիմ ակնկալիք՝ ստանալու համապատասխան սակագին լիցենզիայի ստացման պահի դրությամբ գործող Մեթոդիկային համապատասխան, և այդ լեգիտիմ ակնկալիքը՝ այդ բովանդակությամբ, պահպանվում է մինչև համապատասխան լիցենզիայի ժամկետի ավարտը կամ լիցենզիայի դադարեցումը, լիցենզիան ուժը կորցրած համարելը և այլն: Սակայն, լիցենզիան տրամադրելիս ոչ թե երաշխավորվում է լիցենզիա ստացողի իրավունքը կամ լեգիտիմ ակնկալիքը՝ ստանալ ստացման պահի դրությամբ գործող Մեթոդիկային համապատասխանող սակագին, այլ ճանաչվում են լիցենզավորվող սուբյեկտների՝ կայան կառուցելու և դրանից հետո կայանում արտադրված էլեկտրական էներգիան իրացնելու իրավունքները, և այդ պարագայում սուբյեկտի իրավունքը կամ լեգիտիմ ակնկալիքը գործում է նշված իրավունքների առկայությունը ճանաչելու մասով: Ինչ վերաբերում է սակագնին և այն հաշվարկելու Մեթոդիկային, հարկ է նշել, որ լեգիտիմ իրավունքը սակագնի մասով կարող է ծագել Սակագների կարգին համապատասխան սակագնի սահմանման գործընթաց նախաձեռնելու պահից ոչ շուտ: Ընդ որում, հակառակ մեկնաբանության պարագայում ստացվում է, որ Հանձնաժողովը լիցենզիա տրամադրելու ուժով պարզապես կաշկանդվում է լիցենզավորված սուբյեկտի՝ այդ պահի դրությամբ գործող սակագին ստանալու իրավունքով՝ որպես իմպերատիվ կամ լեգիտիմ ակնկալիք (իրավունք կամ լեգիտիմ շահ), և համապատասխան մասնագիտական վերլուծությունների արդյունքում եզրահանգում է, որ անհրաժեշտ է փոփոխել սակագնի հաշվարկման մեթոդիկան կամ սակագնի չափի հաշվարկման կանոնները, ապա փաստորեն չի ունենա գործնական հնարավորություն՝ փոփոխել ոչ պատշաճ կարգավորման կանոնները: Նման

պայմաններում «Էներգետիկայի մասին» օրենքի 5-րդ ու 8-րդ հոդվածներով ամրագրված՝ սպառողների ու էներգետիկայի բնագավառում լիցենզավորված սուբյեկտների շահերի հավասարակշռման սկզբունքը պարզապես չի կարող լիարժեքորեն իրացվել, որպիսի լիազորությունը վերապահված է Հանձնաժողովին: Այսպիսով՝ Մեթոդիկայով նախատեսված որոշակի դրույթի կիրառման առնչությամբ լեգիտիմ ակնկալիքը կարող էր առաջանալ առնվազն այն պահից սկսած, երբ սակագնի սահմանման վերաբերյալ՝ ուսումնասիրության ընդունված հայտ է ներկայացրել Հանձնաժողով՝ նախաձեռնելով սակագնի սահմանման գործընթաց (վարչարարություն), այսինքն՝ 2020 թվականի նոյեմբերի 6-ից, հետևաբար լեգիտիմ ակնկալիքները այդ պահից ավելի վաղ չէին կարող առաջանալ: Ընդ որում, մինչ այդ պահը Ընկերությունը գտնվում էր դեռևս Կայանի կառուցման գործընթացում (փուլում), հետևաբար ավարտած չլինելով կառուցումը՝ չէր կարող հետագա ժամանակահատվածի համար՝ սակագնի կոնկրետ չափի կամ հաշվարկման մասով, ունենալ լեգիտիմ ակնկալիքներ:

- Ինչ վերաբերում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2019 թվականի հունիսի 5-ին Ընկերությանը տրամադրված №ՏՊ-151-6(10)/0349 տեխնիկական պայմանում փոփոխություն կատարված չլինելու մասով Ընկերության կողմից ներկայացված պնդմանը, ապա պետք է նշել, որ Ընկերությունը՝ Լիցենզիայի ստացման փուլում ներկայացրել է նշված տեխնիկական պայմանը (որում նշված է 35 կՎ լարում), մինչդեռ Լիցենզիայի պայմաններում փոփոխություն կատարելու դիմում և սակագնի սահմանման հայտ ներկայացնելիս արդեն 2020 թվականի մարտի 5-ին №ՏՊ-151-6(10)/0298 տեխնիկական պայմանը (որում նշված է 10 կՎ լարում): Ուստի ակնհայտ է, որ ներկայացվել է լրիվ այլ տեխնիկական պայման, համաձայն որի փոփոխվել են բաշխման ցանցին էլեկտրակայանի միացման լարման պայմանները՝ նախկին 35 կՎ-ի փոխարեն դառնալով 10 կՎ:

- «Էներգետիկայի մասին» օրենքով ամրագրված սկզբունքներին հակասելու մասին Ընկերության ներկայացրած պնդումների մասով հարկ է նշել, որ №498-Ա որոշման ընդունումը նշված օրենքի որևէ սկզբունքի չի հակասում: Ընդ որում, Ընկերությունը որևէ կերպ չի հստակեցրել, թե «Էներգետիկայի մասին» օրենքով ամրագրված կոնկրետ որ սկզբունքն է խախտվել Հանձնաժողովի կողմից վերոնշյալ որոշման ընդունմամբ:

դ. №498-Ա որոշման փոփոխման կամ բեկանման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 77-րդ հոդվածով սահմանված հիմքերը բացակայում են, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Մերժել Հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 23-ի №498-Ա որոշումն Ընկերության նկատմամբ սահմանված սակագնի մասով անվավեր ճանաչելու և վերջինիս նկատմամբ, առանց 0,9 գործակիցը հաշվարկի մեջ կիրառելու, սակագին սահմանելու վերաբերյալ Ընկերության 2023 թվականի փետրվարի 22-ի վարչական բողոքը:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
17 մայիսի 2023թ.